

1.3. Գներ և սակագներ

2000թ. հունվարին գների փոփոխությունները, ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(տոկոսներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	101.9	100.1	99.2	99.7	98.9	101.2
2000թ. հունվարը 1999թ. հունվարի նկատմամբ	100.0	103.7	100.6	100.2	89.6	95.6

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է 111 արդյունաբերական բազային կազմակերպություններում՝ 283 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

⁴⁾ Կաշվարկում է տրամապորտի 4 տեսակներով (երկարուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բերնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:


⁵⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Սպառողական գներ: ՀՀ սպառողական շուկայում 2000թ. հունվարին արձանագրվել է սղած, ինչը հիմնականում պայմանավորված է պարենային որոշ ապրանքատեսակների սեղոնայնությամբ, պահանջարկի ու առաջարկի հարաբերակցության և արտարժութային շուկայում դրամի փոխարժեքի փոփոխմամբ:

2000թ. հունվարին նախորդ ամսվա համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 101,9 %, այդ բվիւմ պարենային ապրանքներինը՝ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 102,7 %, ոչ պարենային ապրանքներինը՝ 99,7 %, ծառայությունների սակագներինը՝ 100,2 %, իսկ նախորդ տարվա հունվարի համեմատ՝ համապատասխանաբար 100,0 %, 98,6, 102,4 և 102,0 %:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները
2000թ. հունվարին տոկոսներով (նախորդ ամիսը = 100.0)



2000թ. հունվարին 1999թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 1,9 % գնաճի պայմաններում, հանրապետության արտարժույթի շուկայում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0,5 % հավելած նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի՝ 4,0 և 3,3 %-ի փոխարեն:

Պարենային ապրանքների գներ: Պարենային ապրանքների շուկայում 2000թ. հունվարին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է 3,0% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորված է դիտարկված որոշ պարենային ապրանքների սեզոնայնությամբ: Ընթացիկ ամսում նկատելիորեն աճել են բանջարեղենի (22,7%) և մրգի (21,3%) գները: Հանրապետությունում դիտարկված բնակավայրերում մրգի գնաճը կազմել է 3,9-57,7%, ընդ որում համեմատաբար բարձր աճ արձանագրվել է Գյումրիում: Երևանում մրգի գնաճը կազմել է 19,9%: Նշված ժամանակահատվածում նկատելիորեն աճել են խնձորի (40,9%), տանձի (40,6) խաղողի (31,4), աղամաթզի (16,3%) գները: Միաժամանակ, սեզոնայնությամբ պայմանավորված, նվազել են ցիտրուսային մշակաբույսերից նարնջի (2,8%) և կիտրոնի (1,9%) գները:

Հանրապետության դիտարկված բնակավայրերում 2000թ. հունվարին բանջարեղենի և կարտոֆիլի գներն աճել են 6,7-64,5%-ով: Համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Եղեգնաձորում: Այս ապրանքախմբում նկատելի է լոլիկի (54,5%), վարունգի (26,3), կաղամբի (26,1), գազարի (14,5), գլուխ սոխի (11,4), կարտոֆիլի (10,4 %) գնաճը:

Հունվարին հացամթերքի, ծվի ապրանքախմբերում գրանցվել է համապատասխանաբար 0,2 և 7,6% գնաճ: Կաթնամթերքի և հրուշակեղենի ապրանքախմբերում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ ծկնամթերքի (սիգ ծկան գնի 7,0 % նվազմամբ պայմանավորված), շաքարավազի, ոչ ոգելից խմիչքի, սուրճի, թեյի, կակաոյի, կենդանական և բուսական յուղի գծով արձանագրվել է գների 5,8-0,1 % նվազում:

2000թ. հունվարին հանրապետությունում նկատվել է մսամթերքի գնաճ կազմելով 0,6%, ընդ որում ոչխարի, թռչնի, խոզի և տավարի մսի գներն աճել են համապատասխանաբար 1,9%-ով, 1,0, 1,0 և 0,9 %-ով: Դիտարկված բնակավայրերից 5-ում մսամթերքի գներն աճել են 0,8-4,1%-ով (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է Եղեգնաձորում): Երևանում մսամթերքի գներն աճել են 1,6%-ով, իսկ Յրազդանում (Չարենցավանում), Վաղարշապատում, Գյումրիում, Դիլիջանում և Թալինում գրանցվել է մսամթերքի գների 5,8-0,1 % նվազում:

2000թ. հունվարին ոգելից խմիչի և ծխախոտի ապրանքախմբում շարունակվել է դեռևս նախորդ տարվա օգոստոսից սկսած գնաճը՝ կազմելով 1,0%, ընդ որում գնաճի հիմնական մասը, ինչպես և նախորդ ամիսներին, բաժին է ընկնում ծխախոտին՝ կազմելով 1,0%, իսկ ոգելից խմիչին՝ 0,6 %:

Ստորև բերված են գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(սոլիսներով)

	2000 թ վ ա կ ա մ ի		1999թ. հունվարի նկատմամբ
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ	1999թ. հունվարի նկատմամբ	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչը և ծխախոտ)	102,7	98,6	102,5
Պարենային ապրանքներ	103,0	94,3	102,7
հացամթերք	100,2	97,3	99,7
մսամթերք	100,6	95,1	98,5
ծկնամթերք	94,2	91,0	96,7
կաթնամթերք	100,0	93,7	100,6
ծոլ	107,6	101,4	107,7
կենդանական և բուսական յուղ	99,9	91,4	99,1
միջոց	121,3	83,7	120,1
բանջարեղեն և կարտոֆիլ	122,7	88,4	121,8
շաքարավազ	97,2	88,0	101,1
սուրճ, թեյ, կակաո	99,7	96,2	99,9
հրուշակեղեն	100,0	97,3	99,6
ոչ ոգելից խմիչը	99,6	98,5	100,2
Ոգելից խմիչը և ծխախոտ	101,0	143,1	100,7

Ոչ պարենային ապրանքների գմեր: Ոչ պարենային ապրանքների շուկայում 2000թ. հունվարին նախորդ ամսվա համեմատ արձանագրված գմերի աճնշան նվազումը բացատրվում է գրենական պիտույքների, գեղահարդարման, անձնապիտո ապրանքների, կահույքի, տեքստիլեղենի, դեղամիջոցների, կոշկեղենի, հագուստի և կտորեղենի, խոհանոցային սպասքի, մշակույթի ապրանքների, գորգեղենի, շինանյութերի ապրանքախմբերում գրանցված գմերի 1,4-0,1% նվազմանը: Միաժամանակ 0,5-1,4% գմաճ է արձանագրվել վառելիքի, լվացամիջոցների, կենցաղային էլեկտրաապրանքների, ուսկերչական իրերի գծով, իսկ այգեգործական ապրանքների գմերը մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

2000թ. հունվարին նախորդ ամսվա համեմատ բենգինի միջին հանրապետական գինն աճել է 0,9 %-ով, իսկ դիգելային վառելիքի գծով դիտվել է մանրածախ գմի 1,5 % նվազում:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբների գմերի փոփոխությունները

(սոլյուսներով)

	2000 թվականի		1999թ. հունվարը 1998թ. դեկտեմբերի նկատմամբ	
	հունվարը			
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ	1999թ. հունվարի նկատմամբ		
Ոչ պարենային ապրանքներ	99,7	102,4	100,2	
<i>այդ թվում՝</i>				
հագուստ և կտորեղեն	99,5	97,0	100,4	
վառելիք	100,5	111,8	99,4	
կահույք	99,1	99,1	100,3	
գորգեղեն	99,8	98,0	99,7	
տեքստիլեղեն	99,0	92,9	100,2	
խոհանոցային սպասք	99,7	97,6	100,8	
լվացամիջոցներ	100,7	96,2	99,7	
շինանյութեր	99,9	97,2	100,3	
այգեգործական ապրանքներ	100,0	99,4	100,0	
դեղամիջոցներ	99,2	89,8	99,6	
մշակույթի ապրանքներ	99,6	94,2	99,8	
գրենական պիտույքներ	98,6	86,9	100,3	
գեղահարդարման ապրանքներ	98,8	95,8	100,0	
ուսկերչական ապրանքներ	101,4	93,0	100,1	
անձնապիտո ապրանքներ	99,0	96,2	100,4	

Ծառայությունների սակագներ: 2000թ. հունվարին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների սակագներն աճել են 0,2%-ով, ինչը պայմանավորված է առողջապահության, հանրային սննդի, հանգստի, կենցաղային և կրթության ծառայությունների ոլորտում արձանագրված սակագների 0,2-2,1% հավելածով: Բնակարանային-կոմունալ, իրավական ու բանկային ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա մակարդակին, իսկ մշակույթի, կապի, տրանսպորտի, ծառայությունների գծով արձանագրվել է սակագների 3,1-0,6 % նվազում:

Բնակչությանը նատուրված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(սոլյուսներով)

	2000 թվականի		1999թ. հունվարը 1998թ. դեկտեմբերի նկատմամբ	
	հունվարը			
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ	1999թ. հունվարի նկատմամբ		
Դառայություններ, ընդամենը	100,2	102,0	113,1	
<i>այդ թվում՝</i>				
կենցաղային	100,3	101,0	100,8	
բնակարանային-կոմունալ	100,0	100,0	118,2	
առողջապահության	102,1	104,4	103,2	
տրանսպորտի	99,4	99,3	100,6	
կապի	99,1	100,4	151,9	
մշակույթի	96,9	107,8	101,7	
կրթության	100,2	125,6	101,1	
հանգստի	100,5	95,5	100,4	
հանրային սննդի	101,6	100,7	100,0	
իրավական և բանկային	100,0	100,0	100,0	

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: Հանրապետությունում դիտարկված բնակավայրերից 9-ում 2000թ. հունվարին նախորդ ամսվա համեմատ սպառողական գներն աճել են 0,1-4,8 %-ով (համեմատաբար բարձր գնած արձանագրվել է Եղեգնաձորում), իսկ Հրազդանում (Չարենցավանում) դրանք նվազել են 0,6 %-ով: Երևանում գնաճը կազմել է 2,4 %:

Պարենային ապրանքների գծով ընթացիկ ամսում դիտարկված բնակավայրերից 9-ում ընթացիկ ամսում արձանագրվել է 0,8-8,4 % գնած (գնաճի ամենաբարձր %-ը գրանցվել է Եղեգնաձորում), իսկ Հրազդանում (Չարենցավանում)՝ գների 0,7 % նվազում:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները՝ 2000թ. հունվարի 30-ի դրությամբ.

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիսոր	Զուտասնյակի համար	Շաքար-պավագ	Կարտոֆիլ	Գլուխստիս	Կաղամբ	Խնձոր
ՀՀ, ընդամենը այդ թվում	1058	1299	1502	612	462	214	115	126	68	290
Երևան	1067	1358	1522	643	456	217	118	117	71	317
Գյումրի	950	1200	1417	527	475	223	87	140	50	250
Վանաձոր	1000	1300	1500	560	430	198	105	130	50	275
Վաղարշապատ	1200	1300	1350	520	420	190	130	100	80	300
Թայշմ	1100	1200	1500	600	450	200	150	120	100	200
Դիլիջան	1000	1200	1500	600	550	220	120	150	50	250
Հրազդան, Չարենցավան	1100	1200	1500	630	450	210	125	150	80	220
Եղեգնաձոր	1000	1100	1500	620	480	200	150	150	100	200
Մարտունի	920	1200	1500	600	550	230	75	180	40	300
Կապան	1200	1060	1640	550	500	230	128	130	68	220

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի հաշվարկով) 2000թ. հունվարի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5746 դրամ, ինչը ընդամենը 0,8%-ով ցածր է նույնանուն ապրանքատեսակների 1999թ. դեկտեմբերի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքից (5791 դրամ): Ընթացիկ ամսում 1999թ. դեկտեմբերի նկատմամբ նշված պարենային ապրանքների մի մասի միջին գները (ձվի, խնձորի, շաքարավագի, բուսական և կենդանական յուղի) նվազել են 9,3-0,7 %-ով, իսկ մյուս 5 ապրանքատեսակների գծով արձանագրվել է 0,2-18,9% գնած: Դիտարկված բնակավայրերուն վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է Գյումրիում (5319 դրամ), իսկ ամենաբարձրը՝ Երևանում (5886 դրամ):

2000թ. հունվարին հանրապետությունում դիտարկված բնակավայրերից 8-ում արձանագրվել է ոչ պարենային ապրանքների գների 1,5-0,2 % նվազում, իսկ Կապանում և Գյումրիում գնած համապատասխանաբար 1,5 և 0,1 %:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2000թ. հունվարին հետազոտված բնակավայրերից 7-ում արձանագրվել է սակագների 0,5-0,1% նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոսը գրանցվել է Գյումրիում), իսկ Վանաձորում, Եղեգնաձորում և Երևանում գրանցվել է սակագների 0,1-0,5 % հավելած:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2000թ. հունվարին 1999թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված բնակավայրերի և ապրանքախմբների

(սոոկումերով)

Սպառողական գների ինդեքսը	Սպառողական ապրանքների	այդ թվում՝				
		պահանջման ապրանքական ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	բնակչությանը մատուցված ծառայությունների	
ՀՀ, ընդամենը այդ թվում	101.9	102.2	102.7	103.0	99.7	100.2

	Սպառողակամ գների ինդեքսը	Սպառողակամ ապրանքների	այդ թվում՝				բնակչությանը նատուցված ծառայությունների
			որանցից՝				
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախտոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների		
Երևան	102.4	102.7	103.3	103.7	99.8	100.5	
Գյումրի	101.9	102.3	102.7	103.3	100.1	99.5	
Վանաձոր	102.3	102.7	103.3	104.0	99.7	100.1	
Վաղարշապատ	101.2	101.4	101.8	102.0	99.8	99.8	
Թափին	101.4	101.7	102.1	101.8	99.5	99.6	
Դիլիջան	100.1	100.1	100.2	100.8	99.8	99.6	
Ջրազդան, Չարենցավան	99.4	99.4	99.6	99.3	98.5	99.6	
Եղեգնաձոր	104.8	105.6	107.0	108.4	99.4	100.2	
Մարտունի	100.8	100.9	101.2	101.4	99.6	99.9	
Կապան	101.9	102.3	102.5	102.6	101.5	99.7	

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս: 2000թ. հունվարին 1999թ. դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերական ծեռնարկությունների թողարկած արտադրանքի գնաճը կազմել է 0,1 %, նախորդ տարվա համապատասխան ժամակահատվածի 3,2 %-ի դիմաց: Ընթացիկ ամսում թողարկած արտադրանքի գնաճ է արձանագրվել գունավոր մետալուրգիայի (18,9 %), թանկարժեք ու կիսաթանկարժեք իրերի (0,7), սննդի (ներառյալ այուրի և համակցված կերերի) (0,6 %) արդյունաբերության ճյուղերում: Միաժամանակ 6,4-1,3 % գների նվազում է արձանագրվել մեքենաշինության, քիմիական, նավթաքիմիական և կենսատեխնոլոգիական, շինանյութերի, էներգետիկայի արդյունաբերությունում, ինչպես նաև հրատարակչական գործերի արտադրությունում, իսկ ռադիոէլեկտրոնիկայի, թերև, անտառային, փայտամշակման և թղթ-ցեսուլոզի արդյունաբերությունում պահպանվել է գների նախորդ ամսվա նակարդակը:

2000թ. հունվարին նախորդ տարվա հունվարի համեմատ արդյունաբերական ծեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 103,7 %:

Բեռնափոխադրումների սակագների ինդեքս*: 2000թ. հունվարին 1999թ. դեկտեմբերի նկատմամբ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 97,9 %: Ծառայության այս ոլորտում սակագների ընդհանուր նվազումը պայմանավորված է խողովակաշարային և երկարությային տրանսպորտում արձանագրված սակագների համապատասխանաբար 2,6 և 1,9 % նվազմամբ: Միաժամանակ սակագների հավելած է գրանցվել օդային տրանսպորտում՝ 5,9% և ավտոմոբիլայինում՝ 0,3%:

2000թ. հունվարին նախորդ տարվա հունվարի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելած կազմել է 0,2 %:

Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս: 2000թ. հունվարին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 98,9%, ընդ որում մթերող կազմակերպություններին և շուկայում իրացված գյուղմթերքների գները նվազել են համապատասխանաբար 18,8 և 4,0%-ով, իսկ անհատ քաղաքացիներին իրացված գյուղմթերքների գծով գրանցվել է 0,1 % գնաճ:

Ընթացիկ ամսում հանրապետությունում արձանագրվել է բուսաբուծական մթերքների իրացման գնաճ՝ կազմելով 2,6%, ինչը պայմանավորված է բանջարեղենի (10,9%), հացահատիկային մշակաբույսերի (4,1), մեղրի (4,1), կերային մշակաբույսերի (0,5%) իրացման գնաճով: Ընթացիկ ամսում մթերող կազմակերպություններին և անհատ քաղաքացիներին իրացված բուսաբուծական մթերքների գներն աճել են համապատասխանաբար 23,2 և 6,0 %-ով, իսկ շուկայում դրանք նվազել են 3,8 %-ով:

Հանրապետության դիտարկված մարդերից 6-ում 2000թ. հունվարին արձանագրվել է բուսաբուծական մթերքների իրացման 0,8-19,0 % գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Արարատի մարզում), իսկ Վայոց Ձորում, Կոտայքում, Արմավիրում և Սյունիքում՝ գների 3,9-1,5 % նվազում:

1. ԻՐԱԿԱՆ ԴԱՏՎԱԾ

Անասնապահական մթերքների իրացման գների ընդհանուր մակարդակը 2000թ. հունվարին 1999թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 3,1 %-ով, ընդ որում իրացման բոլոր ուղղություններով նկատվել է գների նվազման միտում՝ կազմելով 22,1-2,6 %: Դրան մեծապես նպաստել է մսամթերքի (3,0%), ձվի (2,9), կաթնամթերքի (2,3%) ապրանքախմբերում արձանագրված իրացման գների նվազումը:

2000թ. հունվարին նախորդ ամսվա նկատմամբ հանրապետության հետազոտված մարզերից 6-ում արձանագրվել է անասնապահական մթերքների իրացման գների 8,3-0,4 % նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Արարատում), իսկ Տավուշում, Սյունիքում, Լոռիում և Գեղարքունիքում՝ 0,3-3,6 % գնաճ:

2000թ. հունվարին՝ 1999թ. հունվարի նկատմամբ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 89,6%, այդ թվում բուսաբուծությանը՝ 85,2, անասնապահությանը՝ 92,3 %:

**Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը հանրապետությունում՝ ըստ մարզերի, 2000թ. հունվարին
(նախորդ ամիսը=100,0)**

(սոոկոսմերով)

	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը 2000թ. հունվարին		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը 2000թ. հունվարին	
	1999 թվականի		1999 թվականի	
	դեկտեմբերի նկատմամբ	հունվարի նկատմամբ	դեկտեմբերի նկատմամբ	հունվարի նկատմամբ
ՀՀ, ընդամենը	98.9	89.6	101.2	95.6
այդ թվում՝				
Արագածոտն	95.1	76.6	99.3	96.2
Արարատ	109.9	90.8	93.4	88.3
Արմավիր	96.5	86.2	99.6	93.6
Գեղարքունիք	109.0	94.4	103.3	97.7
Լոռի	101.8	101.3	105.1	96.3
Կոտայք	96.7	99.9	100.8	88.4
Շիրակ	100.4	91.2	100.4	98.1
Սյունիք	99.8	93.8	100.3	108.2
Վայոց Ձոր	98.5	98.8	102.2	98.7
Տավուշ	100.4	92.6	95.8	89.0

2000թ. հունվարին նախորդ ամսվա նկատմամբ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գնաճը կազմել են 1,2 %, ինչը հիմնականում պայմանավորված է անասունների (16,0%), գյուղատնտեսական մանր գործիքների (13,4), բույսերի պաշտպանության միջոցների (6,8), էներգիայի ու քայլուղերի (1,5), պարարտանյութերի (0,5) գնման գնաճով: Միաժամանակ 23,1-0,1%-ով նվազել են շինանյութերի, մեքենասարքավորումների և դրանց պահեստամասերի, անասնակերի, սերմացուների ու տնկինների գնման գները և գյուղատնտեսության վճարովի ծառայությունների սակագները:

2000թ. հունվարին նախորդ ամսվա նկատմամբ, հանրապետության դիտարկված մարզերից 6-ում արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների 0,3-5,1% գնման գնաճ, իսկ 4-ում՝ 6,6-0,4 % նվազում:

2000թ. հունվարին նախորդ տարվա հունվարի նկատմամբ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը կազմել է 95,6 %:

^{*)} Սկսած 2000թ. հունվարից ընդհանուր օգտագործման տրամադրութով՝ բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկը կատարվում է տրամադրութի 4 տեսակներով: Երկարուղային, ավտոմոբիլային, օդային բեռնափոխադրումներից բացի՝ բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկման համար դիտարկվում է նաև խողովակաշարային բեռնառաքումների սակագները: